ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 նոյեմբերի 2019 թվականի N 114 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ «ՍՅՈՒՆԻՔ - ԱՐՑԱԽ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով նախատեսված հատկացումները,

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Սյունիքի մարզում «Սյունիք-Արցախ» մշակութային միջոցառում կազմակերպելու նպատակով «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 900.000 (ինը հարյուր հազար) դրամ, նրա հետ կնքելով հանձնարարության պայմանագիր:
2. Հաստատել «Սյունիք-Արցախ» մշակութային միջոցառման կազմակերպական կոմիտեի կազմը, անցկացման ծրագիրը, աշխատակարգը, ծախսերի նախահաշիվը և ժամանակացույցը՝ համաձայն 1-5-րդ հավելվածների:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

28.11.2019

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

2019թ նոյեմբերի 28

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2019թ նոյեմբերի 28 -ի
N114-Ա որոշման

ԿԱԶՄ

«Սյունիք-Արցախ» մշակութային միջոցառման

1. Ն.Բաբայան	ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ /նախագահ/
2. Գ.Թադևոսյան	ՀՀ Սյունիքի մարզպետի խորհրդական
3. Ն.Դավթյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
4. Մ.Գանդալյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
5. Ս.Ավետիսյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
6. Ա.Սիմոնյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետի ժ/պ
7. Վ. Արզումանյան	«Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

27.11.2019

X

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Подписано: TADEVOSYAN GRIGOR 1909590101

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղարի տեղակալ Գ.Թադևոսյան

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2019թ.նոյեմբեր 28 -ի
N 114Ա որոշման

Ծրագիր
«Սյունիք-Արցախ» մշակութային միջոցառման

Ծրագրի էությունը՝

Կազմակերպել Սյունիքի մարզի և Արցախի Հանրապետության մշակույթի ոլորտում երիտասարդ-ստեղծագործողների, պատանի նկարիչների, երաժշտական և պարի խմբերի, անհատ կատարողների մշակութային համագործակցական փոխայցելություններ:

Ծրագրի նպատակը՝

Ներկայացնել ազատ, անկախ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության կայացած լինելը, սերմանել մատաղ սերնդի մեջ հայրենիքի նկատմամբ սերն ու հավատը, հայրենասիրության գաղափարի դրսևորումը:

Արցախի Հանրապետության և Սյունիքի մարզի արվեստի բնագավառի շնորհալի և երիտասարդ ստեղծագործողների, պատանի նկարիչների, մշակույթը ներկայացնող մասնակիցների ծանոթացումը, շփումը, Սյունիքի և Արցախի մշակութային սերտ կապերի ամրապնդումը:

- Գիտաճանաչողական այց Արցախի պատմամշակութային վայրեր և թանգարաններ:
- Ծաղկադրում Արցախյան գոյամարտում զոհված ազատամարտիկների, անհայտ կորածների հուշարձանին, ապրիլյան քառօրյա պատերազմում զոհվածների շիրիմներին:
- Մեկնում Մարտակերտի շրջան գյուղ Վանք /Գանձասար վանական համալիր/:
- Հանդիպում Արցախի թեմի հոգևոր առաջնորդների հետ:
- Մոմավառություն Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցում /Գանձասար/:
- Այցելություն արցախցի զոհված ազատամարտիկների և Արցախյան պատերազմում անհայտ կորած ազատամարտիկների թանգարան /ք.Ստեփանակերտ/:
- Այցելություն Արցախի Հանրապետության բերդաքաղաք Շուշի՝ կերպարվեստի պետական թանգարան, Շուշիի երկրաբանության, պատմության և գորգերի թանգարաններ, մոմավառություն՝ Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցում:
- Հանդիպում Արցախի և Սյունիքի մշակույթի բնագավառի ներկայացուցիչների մասնակցությամբ, «Սյունիք-Արցախ» մշակութային կապերի ամրապնդմանը և զարգացմանն ուղղված հարցերի համատեղ քննարկում, փորձի փոխանակում:

27.11.2019

X

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Подписано: TADEVOSYAN GRIGOR 1909590101

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղարի տեղակալ Գ. Թադևոսյան

Հավելված 3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2019թ.նոյեմբեր 28 -ի
N -Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
«Սյունիք-Արցախ» մշակութային միջոցառման

Միջոցառման նպատակն է՝

Արցախի Հանրապետության և Սյունիքի մարզի արվեստի բնագավառի շնորհալի և երիտասարդ ստեղծագործողների, պատանի նկարիչների, մշակույթը ներկայացնող մասնակիցների ծանոթացումը, շփումը, Սյունիքի և Արցախի մշակութային սերտ կապերի ամրապնդումը:

Միջոցառման պատվիրատուն և կատարողը

«Սյունիք-Արցախ» մշակութային միջոցառման պատվիրատուն է ՀՀ Սյունիքի մարզպետարանը, կատարողը մարզային ենթակայության «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

Միջոցառման մասնակիցները

«Սյունիք-Արցախ» մշակութային միջոցառմանը մասնակցում են Սյունիքի մարզում անցկացված «Սյունիքյան մշակութային շրջագայություն» խորագրով մշակութային միջոցառմանը մասնակցած ակտիվ մասնակիցները, մարզի համայնքների արվեստի, երաժշտական և գեղարվեստի դպրոցի սովորողները, համայնքներում գործող ժամանակակից և ժողովրդական պարային խմբերի մասնակիցները, արվեստի բնագավառի շնորհալի պատանի նկարիչներ, անհատ կատարողներ:

Միջոցառման ժամկետը և վայրը

Մշակութային հանդիպումները և այցերը կազմակերպվելու են 2019 թվականին նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, Արցախի Հանրապետության Ստեփանակերտ և Շուշի քաղաքներում:

Միջոցառման ընթացքը և ծախսերը

Միջոցառումները կազմակերպվում են ըստ անցկացման ծրագրի, որը հաստատված է ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից, որտեղ ներկայացված են ժամանակացույցը և անցկացման վայրը: Միջոցառումների ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները համաձայնեցվում են կազմկոմիտեի հետ:

Միջոցառումների անցկացման հետ կապված ծախսերը հոգում է «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ը:

27.11.2019

X

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Подписано: TADEVOSYAN GRIGOR 1909590101

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Գ. Թադևոսյան

Հավելված N 4
ՀՀ Սյունիքի մարզպետի
2019թ. նոյեմբերի 26-ի
N 114-Ա որոշման

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Սյունիք-Արցախ» մշակութային միջոցառման

h/h	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /դրամ/
1	Տրանսպորտային ծառայությունների մատուցում	4216	232,0
2	Հանրային սննդի ծառայություն	4236	364,5
3	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	270,0
4	Այլ մասնագիտական ծառայություններ	4241	15,0
5	Գրասենյակային ապրանքներ	4261	7,5
6	Այլ ծախսեր	4861	11,0
	Ընդամենը		900,0

27.11.2019

X

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Подписано: TADEVOSYAN GRIGOR 1909590101

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Գ.Թադևոսյան

Հավելված 5
ՀՀՍյունիքի մարզպետի
2019թ. նոյեմբերի 23-ի
N 149Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
«Սյունիք-Արցախ» մշակութային միջոցառման

h/h	Միջոցառմանանվանումը	Կատարման ժամկետը	Կատարման վայրը
1.1-	Հանդիպում Արցախի Հանրապետության արվեստի գործիչների հետ	նոյեմբեր դեկտեմբեր	Արցախի Հանրապետություն ք.Ստեփանակերտ
1.2	Պսակադրություն և մոմավառություն Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների շիրիմներին	նոյեմբեր դեկտեմբեր	Արցախի Հանրապետության ք.Ստեփանակերտ և Շուշի քաղաքներում
1.3	Ուխտագնացություն Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի գ.Վանք /Գանձասար վանական համալիր/	նոյեմբեր դեկտեմբեր	Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի գ.Վանք /Գանձասար վանական համալիր/
1.4	Հանդիպում Արցախի և Սյունիքի մշակույթի բնագավառի ներկայացուցիչների մասնակցությամբ, «Սյունիք-Արցախ» մշակութային կապերի ամրապնդմանը և զարգացմանն ուղղված հարցերի համատեղ քննարկում, փորձի փոխանակում:	նոյեմբեր դեկտեմբեր	ք.Ստեփանակերտ
1.5	Ուրախ ժամանց և ազգային խաղեր	նոյեմբեր դեկտեմբեր	Արցախի Հանրապետություն ք.Ստեփանակերտ
2.1	Այցելություն ք. Ստեփանակերտ, Արցախցի զոհված ազատամարտիկների թանգարան	նոյեմբեր դեկտեմբեր	Արցախի Հանրապետություն ք.Ստեփանակերտ
2.2	Այցելություն Արցախի Հանրապետության բերդաքաղաք Շուշի. Մոմավառություն Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցում. Այցելություններ Շուշիի կերպարվեստի պետական թանգարան, Շուշիի երկրաբանության թանգարան, Շուշիի	նոյեմբեր դեկտեմբեր	Արցախի Հանրապետության ք. Շուշի

	պատմության և գորգերի թանգարաններ		

27.11.2019

X

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Подписано: TADEVOSYAN GRIGOR 1909590101

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Գ.Թադևոսյան